ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«14» ապրիլի 2025թ. № 289

ՍՊԱՐՏԱԿ ՇԱՎԱՐՇԻ ՄԱԹՈՍՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԲՆԱԿԱՐԱՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի ավագանու 2007 թվականի հունիսի 13-ի թիվ 22 որոշումը, Սպիտակի քաղաքապետի 2003 թվականի սեպտեմբերի 1-ի թիվ 111 որոշման հիման վրա տրված բնակելի տարածության թիվ 5 օրդերը, «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06011GYNMYET) և Սպարտակ Շավարշի Մաթոսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 15012025-06-0051 վկայական՝ տրված 15.01.2025.թվականին) « Մարզ Լոռի, համայնք Սպիտակ Սպիտակ ք. Ս.Շահումյան փողոց, 1/3 շենք» հասցեի բազմաբնակարան բնակելի շենքի 3-րդ հարկում գտնվող 112,2 քառակուսի մետր մակերեսով չորս սենյականոց բնակարանը նվիրատվությամբ փոխանցել Սպարտակ Շավարշի Մաթոսյանի ընտանիքին՝ որպես ընդհանուր համատեղ սեփականություն.
   1) Սպարտակ Շավարշի Մաթոսյան - ինքը՝ ծնված 12.07.1949 թվականին,
   2) Վեներա Մուշեղի Մաթոսյան -կինը՝ ծնված 02.11.1950 թվականին,
   3) Նելլի Սպարտակի Մաթոսյան -աղջիկը՝ ծնված 02.05.1971 թվականին,
   4) Նարինե Սպարտակի Մաթոսյան - աղջիկը՝ ծնված 10.04.1972 թվականին,
   5) Մարուսյա Սպարտակի Մաթոսյան - աղջիկը՝ ծնված 02.05.1980 թվականին,
   6) Շավարշ Սպարտակի Մաթոսյան - տղան՝ ծնված 21.02.1984 թվականին:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված բնակարանին տրամադրել «Սպիտակ համայնք, ք. Սպիտակ, Ս. Շահումյան փողոց, 1/3 շենք, 5 բնակարան» հասցեն:
3. Նվիրառուների հետ կնքել անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր, որից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնի պետ Վարուժան Ապրեսյանին՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետում փոփոխություն կատարել համայնքի գույքային հաշվեկշռում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ ապրիլի 14
ք.Սպիտակ